Այժմ 'ի 1890 թուին, Սաղիանի վանքն ունի մերձ և առ դրանն մի այգի 2 խալվար տարածութեամբ, որ 'ի տարին բերէ զկապալադրամ երբեմն 600 և անցեալ ամին 700 բուբլի, իսկ ի 1889 և 1890 ամսն 1100, և 1200 բուբլի։

Ունի և երեսուն մասն (կտոր) վարելահողս 51½ դէսեատին (օրավար) տարածութեամբ, որք բերեն 'ի տարին 4, և ի վերջին ամս 6 թաղար (խալվար) ցորեան. և մի արտաչափ անտառ, և այսոքիկ կալուածք երկրաչափական կարգաւ արդէն հաստատեալք են և վաւերացուցեալք. ինչպէս ահա պլանը ցոյց է տալի, որ նկարած և հաստատուած է յԱրքունի պալատէն Տրփխիսու յ-2-ն նոյեմբերի 1890 ամի № 590։

Վանահայր Ստեփաննոս վարդապետն՝ սոյն 1890 թուիս տնկել տուեց մի այգի ևս վանական հողոյ վերայ մի օրավար տարածութեամբ, ընտիր, ջոկովի, մեծ մասամբ սպիտակ խաղողից, և մտաղիր է, եթէ յաջողի Նախիջևանայ այգեաց պէս պատրաստել, ինչպէս և տնկեց կարգաւ՝ առու առու, ըստ որում այս երկրի այգիքն խառն ի խառն են տնկած, որովհետև անջուր են և առուի պէտք չունին։

Անշարժ կալուածք վանօրէից Շամախու թեմի, ըստ տօմարաց վիճակային տաւնին ի 1890 ամի։

Ս. Ստեփաննոս վանք ի Սաղիան.	
Մի այգի խաղողոյ տընթեր վանքին տարածութեամբ 3 դեսեատին և 1460 քառակուսի սաժէն որէ 1¾ խալվար։	Այգին բերէ ի տարին ց-700 մանէթ, և այժմ 1890, 1200 ր.
Եօթն քարաչէն հասարակ սենեակ և մի տընտեսատուն։ 28 կտոր վարելահողք և խոտատեղիք ի Սաղիան խառն ընդ գիւղացւոց տարածութեամբ 35 դեսեատին և 2184 քառակուսի սաժէն։	Վարելահողք և խոտատեղիք բերեն 5½ թաղար ցորեան ի տարին ըստ կապալատուութեան.
Մի կտոր վարելահող, որ գտանի ի Գիւրջեւան գեղջ, տարածութեամբ 11 դես. 1408 քառակուսի սաժէն. Սենեակք վեց ի վերայ տնտեսատան չինեալ ի 1888 ամի։	Վարելահողս բերէ ի տարին, 15 բուբլի. և 1891 թուէն տարին 30 մանէթ։